600.0238.25.05.07

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

25 մայիսի 2007 թվականի №238Ա
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2004 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի №122Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածը, Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2003 թվականի սեպտեմբերի 22-ի «Տրանսգազ» սահմանափակ պատաս-խանատվությամբ ընկերությանը բնական գազի փոխադրման լիցենզիա տրամադրելու մասին» №58Ա որոշմամբ հաստատված «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատ-վությամբ ընկերության բնական գազի փոխադրման №0111 լիցենզիայի պայմանների 5.33 կետը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձ-նաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի հոկտեմբերի 5-ի «Տրանսգազ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության գնումների կարգը և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացվելիք տեղեկատվությունների ձևերը հաստատելու մասին» №122Ա որոշմամբ հաստատված կարգը (այսուհետ՝ կարգ) լրացնել հետևյալ բովանդակությամբ VI բաժնով.

«VI. ԳՆՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՅԼ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

25. Գնումների կատարման այլ սկզբունքները և գործընթացը

25.1. Պատվիրատուն, առանձին դեպքերում, ելնելով տվյալ գնումների առանձնահատկություններից, կարող է դիմել հանձնաժողով՝ գնումների կատարման համար այլ սկզբունքների և գործընթացի կիրառման համաձայնություն ստանալու համար:

25.2. Սույն կարգի 25.1 կետում սահմանված դեպքերում պատվիրատուն հանձնաժողով է ներկայացնում այդ գնումների առանձնահատկության հիմնավորումները և դրանց կատարման սկզբունքների ու գործընթացի վերաբերյալ իր առաջարկությունները:

25.3 Հանձնաժողովը, ողջամիտ ժամկետում ուսումնասիրելով պատվիրատուի հիմնավորումները և առաջարկությունները, սահմանված կարգով կայացնում է համապա-տասխան որոշում:»:

2. Կարգի 7.2 կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ գ) ենթակետով.

«գ) եթե գնման ենթակա ապրանքները, աշխատանքները և ծառայությունները հնարավոր է ձեռք բերել միայն մեկ անձից, ինչը պայմանավորված է նրա հեղինակային և հարակից իրավունքներով, մրցակցության բացակայությամբ կամ լիցենզիայի առկայությամբ:»:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
25 մայիսի 2007թ.
ժամը 16^{00}